

գրիթէ առանց անդրադառնալու, և միշտ աչքերն տղուն վրայ սկեռելով, ձեռքը զլուխն բարձրացուց և զիխարկը բացաւ:

— Պարո՞ն գնդապետ, — գոշեց աղան զարմացմամբ: — Ի՞նչ կ'ընես պարոն գնդապետ: ինձի համար:

Նոյն պահուն այն տմարդի զինուորն, որ բնաւ չէր ըստած հեղ խօսք մը իրմէ ստորինագունին, չսփէ գուրս գորովալիք և բազզը ձայնով մը պատասխանեց. — Ցիրափի ևս գնդապետ մի եմ, բոցց դու դիւցազն մ'ես:

Ցեայ բազուկներն տարածած թմրկահարին վրայ ինկաւ, և երեք անգամ համբուրեց անսր սիրուբ:

ՆԱԲ ԶՐՄՈՒԴ ԹԷՌԴՈՍԻՈՅ



Պէսէտև երկարաբան շլինելու համար ի մէջ չբերինք ատենախօսից ճառերը, այլ անհրաժեշտ հարկ է, ակնարկ մի տալով ընդհանուրին վերայ, ի մէջ բերել հայ ատենախօսին Գ. Հ. Խորէն Ծ. Վ. Վտեանէի, վանահօր Ս. Խաչ վանուց Տաւրիոյ և նախկին աշակերտի Մոսկովուայի համալսարանին, ոռու լեզով խօսածը, (նոյն ինքեան հեղինակին հայերէն թարգմանածը). Նախ՝ իրեն հայ մտաց արտադրութիւն, երկրորդ՝ վասնզի լրաց իմաստից և ըստ ձեռյն գերազանցեց նա քան զամէն խօսողները, և բուռն ծափահարութեամբ գովեցաւ ամենքէն: Կանգնեցաւ նա բազմութեամն մէջ, բարձր հասակաւ և սպիտակ ալեօթ, պրողեալ վեղարիւ, ամենայն բառ որոշ հնչելով և վայելուշ ձեռերով սկսելովիր ճառը, ի սկզբան անդ ունկնդրաց վերայ մեծ տպաւորութիւն գործեց: Վայելուշ ձեռվ բացատրեց նա Ս. Հոգւոյն սաւատնիլը ի վերայ ջուրց, խօսեցաւ ջրոյն կենսունակ ազգեցութեանը վերայ յարարածս, և թէ ջուրը նիթ է խորհրդական ամենայն կրօնից մէջ. չմոռացաւ յիշելու մի բաժակ ջրոյ, յանուն աշակերտի տառողին վարձը, և եթէ նկարչապետը՝ ջուրը հազարաւոր ձեռով նկարած, ստացել է գերահոշակ անուն, որով և պարծանք է նա Հայ ազգիս: այլ թողունք որ ինքն ատենախօսն բարբառի իւր կովկասեան լեզուով.

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՒՆԵՐ ԵՒ ՏԻԿԻՆԵՐ

Թոյլ առուէք ինձ հայ վարդապետին ևս քանի մի խօսք ասել այսօրուան հանդէսին առթիւ: Շատերն յաճախ աշխարհից տժգոհութիւն են յայտնում, մինչ անգամ նորան գատարկ են համարում. սակայն

մի կողմ թողնելով տաղանդի, հանճարոյ, եռանդի, աշխատութեան արտադրութիւններն, որոնք լցնում են աշխարհս, բաւական են մի- այն երկու զգացմունք մարդկային սիրտը լցնելու համար, սէր առ մարդ- կութիւն, որ թարգմանում է մեծաւ մասամբ սիրով առ հայրենիս, առ ազգն, առ ծննդավայր, և սէր առ ծայրագոյն իակն, որ կառավա- րում է և առաջնորդում է մեզ:

Այսօր մեր տօնած գործում երեսում է հարկէ սէրը, Պ. Յովհ. և Տ. Աննա Այվազովսկիների սէրը առ իրանց ծննդավայրը: Այստեղ ժամանակ չէ խօսելու թէ ինչ է արած Յովհ. Այվազովսկին ի սէր մարդկութեան՝ նոյն մարդկութիւնն բարերարելու և ազնուացնելու համար: Պ. Այվազովսկու մարդկութեան և Ծուսիային արած մեծ երախտիքի մասին՝ երկար և բարձր կը հնչէ անցեալ տարի նէվայի ափերին կատարուած գերօրինակ հանդէսից՝ լուսիայի մայրաքաղա- քից ի լուր ամբողջ քաղաքակիրթուած աշխարհին: Պ. Յովհ. Այվազովս- կին իբրև քաղաքացի ցոյց տուեց այնպիսի սէր առ իւր հայրենի քաղաքը, որ սա միայն կարող էր անմահացնել նորան. (Մականարու- րիշններ):

Մէծ է ջրի նշանակութիւնը մարդիկների և ազգերի կեանքի մեջ: Ումանք մինչև ենթագրում են թէ ջուրն առաւել նշանակութիւն ունի քան թէ ցամաքը. յայտնի է ջրի վերայ գոյութիւն ունեցող քա- զաքը (Վենետիկ), բայց յայտնի չէ առանց ջրի գոյութիւն ունեցող քաղաք, թէպէտ մարդու անդադար ազգեցութեամբ և նորա յաղ- թութիւններով բնութեանը, փոփոխուում են և փոխադարձարար լրացնում են բնութեան ֆիդիքական պայմանները: Զուրը մեծ նշա- նակութիւն ունի կրօնի մէջ ևս, ատեղծագործութեան սկզբից և մինչև ցոյժմ: Աշխարհի ֆրկիլը ջրի մէջ մկրտուելով սկսեց մարդկա- յին ազգի ֆրկութեան գործը. Նորա ֆրկարար գործունէութեան և հրաշքների մեծ մասը, մեծամեծ ծմբարտութիւնների, յայտնեն մարդկութեանը՝ եղաւ Գեննասարէթի գեղեցիկ լճի մօտ, նորա ջրերի վերայ, ջրհորների մօտ, Պրօպտատիկէ աւազանի մօտ: Ջրի մէջ մկրտուե- լով է ընդունում քրիստոնեայն Ս. Հոգւոյն նորհը: Զուրը միայն քրիստոնեաների մէջ չէ որ կրօնական նշանակութիւն ունի. Թէոգո- սիայի բնիկ ժողովուրգների — կարայիմների, թափարների, Հրէաների կրօնական կեանքում ջուրը շափազնց մեծ նշանակութիւն ունի: Եւ ահա մարդկային կեանքի այս բազմանշան տարր և գործիցը՝ ընծայում էք դուք, Մեծապատիւ Պարոն և Ֆիկին, Զեր հայրենի քաղաքին: Մտածող և արժանապէս գնահատող անձերի ներկայ բազմաթիւ համախմբութին այստեղ՝ չէ ապացուցանում արդեօք որ Զեր պարզեր շափազանց մեծ նշանակութիւն ունի Թէոգոսիայի համար: Աւտոի մե- ծահանդէս կերպով տօնում ենք այս օրը և ուրախանում ենք Զեր վերայ: Եւ ինչպէս կարելի է չուրախանալ և հանդէս չկատարել, երբ ան-

ցեալ շաբաթ տօնում էինք նոյնպէս այստեղ հնագոյն հայկական եկեղեցւոյ (Ս. Սարգսի, Ժ. Մարտի) բացման օրը, որ աւերակներից վերականգնեցաւ, Զեր վազուց յայտնած ցանկութեան համաձայն, երբ միենոյն ժամանակ Զեր խորին համակրութիւնը, բաց ի Զեր առատ և մեծագին նպաստներից, ոգեսրում էր վերանորոգութեան սկզբնապատճառին և գլխաւոր առաջնորդին¹ և թե իմացնում էր նորա համար գործի բազմատեսակ դժուարութիւններ: Խոկ այսօր մենք տօնում ենք գեղեցիկ ջրմուղի բացումն անջրդի թէողոսիայում: Ներկայ եղողներից ով արդեօք չետանջուել անջրութիւնից: Հապա ինչ էին անում անբազդ ջունկորներն, երբ ունենոր գասը տանջուում էր: Երկի գեռերկար մոռանալու շենք այն տիսուր տեսարաններ, որոնք անդադար լինում էին զրեթէ չորացած աղբիւրների մօտ և ջրկիրների հետ:

Անդրագարձնելով մեծն նապուտնի խօսքերն, որոնք նա ասաց Եղիպտոսում իւր զինուորներին, թէ կարծես դարեւոր բուրգերից քառասուն դարեր նայում են նոցա վերայ, կասեմ. Քսան և հինգ դարեր նայում էին և սպասում էին այն բարերարին, որ պիտի կենդանացնէր և հարստացնէր հին Քէֆէն ջրով, և Դուք արդարացրիք դարերի լոյսեր, մեծ յաղթանակ տանելով անջրդի բնութեան վերայ. (Բուռն ճափակարուրիւններ):

Այս, մեծապատիւ Պարոն, Դուք արդէն կրում էր Զեր փառքի հրաշապէս կազմուած պայծառ պսակը, և այս անմահ պսակին դըժուար է նոր փայլ մի աւելացնել. բայց գեղեցիկ ջրի պարզեւումն թէոդոսիային մեծ գործ է, և պարզեւողն արժանի է փառաւոր, յիշասակի:

Դարձեալ մի կողմէս կայ առաւել միսիթարական այս գործի մէջ: Գեղարուեստի աշխարհում շատերն անկանած ուսած են Զեր մօտ: Ուրեմն թող նիւթէական կեանքի աշխարհում ևս, մեր այս եսականութեան և շահախնդրութեան դարում, աշխարհիս շատ մեծամեծներն սովորին. Զեղանից՝ գործ դնել իրանց բոլոր ազգեցութիւնը և մասամբ ստացուածքն ոչ յօգուտ և ի շահ իւր անձին, այլ յօգուտ և ի բարեվլայլութիւն հայրենի քաղաքին և այն հասարակութեանը, որի մէջ ապրում են. (Ծափակարուրիւններ): Երեմ միտքա է դալիս թէ որքան դատարկ կը լինէր Թէոդոսիան առանց իւր անուանի նահապետի — Պ. Յովհ. Այս վազով սկսու: Խոկ այժմ՝ որ տեղ և յիշուումէ Յովհ. Այվազովսկու անունը (և որ տեղ արդեօք չէ յիշուում, պալատներից և արքունիքներից ականած մինչև ամենալքատ իրճիթներն), ամենքի ացերն ակամայ զառնում են գէպ ի թէոդոսիա:

Ո՞րքան մեծ պատիւ է թէոդոսիայի համար, և ո՞րքան մեծ պատիւ հայկական ազգի համար ծնել Յովհաննէս Այվազովսկուն. (Ծափակարուրիւններ): Համարձակում եմ յուսալ, որ ինձանից չեն նեղանայ:

1. Այս ճառի հեղինակին:

ոչ հասարակութիւնը և ոչ ինքն Պ. Այլազովսկին, եթէ ես իբրև Հայ յայտարարում եմ՝ թէ մենք Հայերս արդարեւ կատարեալ իրաւունք ունինք մեզ պարծանք համարել Յավիշ. Այլազովսկուն իբրև Հային, որին խորին կերպով յարգում է և գնահատում է հայկական աղջու:

Օրհնեալ լինին յափտեան Ձեր անունը և յիշառակը: Եւ նորա արդէն օրհնուած են: Կստուծոյ օրհնութիւնը գործի յանողութիւնն է, իսկ այսօր թէոդոսիա քաղաքի աղքատներ և հարուստներ խմում են արդէն Ձեր պարգեած ջուրը:

Ս. Աւետարանի խոստման համաձայն փոքրիկներից մէնին բաժակ մի ցուրտ ջուր խմեցնողը՝ կորցնելու չէ իւր վարձը: Մեր ընդհանուր չնորհակալութեան և երախտագիտութեան խորին զգացմունքը և հասարակական բարօրութեան և յառաջադիմութեան բոլոր բարեկամների անկեղծ բարեմաղթութիւնները կը բարձրանան և կը հասնին ամենայն բարիկների երկնաւոր Պարգեատուին (Ծափանարուրիւններ):

Ո՞րքան և խօսէինք, սպառելու չէ մեր հիացման և երախտագիտութեան զգացմունքի խորութիւնը: Ուստի մոյլ տուեկ հոգենորականին հոգենորապէս վերջացնել իւր խօսքը: Բնութիւնը կատարեալ արարչութիւնէ, և նորա մէջ ջուրն կատարենադոյն, մաքուր, սուրբ և սրբարար է, ուստի և էր առաջին և զիսաւոր ապաստանարան Ս. Հոգով, համար ստեղծագործութեան նոյն իսկ սկզբում: « Եւ Հոգի Տեսան շրջէր ի վերայ ջուրց »: Այս աստուածային Հոգին շրջում էր անգագար Ձեր շուրջ, երբ Դուք հրաշալի ջրեր էիք ստեղծում կտաւի վերայ Ձեր ամբողջ գեղարուեստական գործունեւութեան ընթացքում: Ձեզ էր վիճակուած նոյնպէս ստեղծել նիւթական գեղեցիկ ջուրն անջրդի թէոգոսիայում: Թուղ ուրեմն պահպանէ, հովանաւորէ և ոգենորէ Ձեզ Աստուծոյ Հոգին երկար և շատ տարիներ աստուած ապարգե քաղաքակրթող գեղարինեստի փառք լինելու, թէոդոսիայի զարդ և բաղդ, հասարակութեան պատիւ և հայկական ազգի պարծանք լինելու համար. (Երկարաւու բուռն ծափանարուրիւններ):

Խորէ Ծաբ. Վարդաս Այստանէ.

Առ հասարակ ունկնդիրք աննախանձ վկայեցին, որ վարդապետը տարաւ յաղթութիւնը բոլոր ատենախօսից վերայ. խնդացին յոյժ ի սրտէ սակաւաւոր Հայ ունկնդիրք վարդապետին յաղթանակին վերայ, որ յիրաւի սխրալի էր: Գեղեցիկ խօսեցաւ և փրանկ ատենախօսը Բերտրէն, որ իւր զրուածոց ճակատ՝ Լուի դը Սուդաք կը մակարէ. սա ևս բարձր հասակաւ, գեղեցիկ արտասանութեամբ և ազատ ձևերով, բացատրեց ջրոյն ունենալու ապագայ ազգեցութիւնը Այլազեանի հայրենեաց վերայ. երկնցուց նա իւր աջը գեւակ ի ծովածոց, և Պիտի գայ ժամանակ, և արդէն մօտեցած է, ասաց, որ

« սխրանք նայի ծովաչու ճանապարհորդը այս մեր անկեան վերայ։
« Այդ ինչ գեղեցիկ ծոց է, պիտի զրուցէ, և ինչ գեղեցիկ աշ-
« և խարհք։ — Եւ պիտի ստանայ պատասխան, թէ այդ խանձարութք են
« Այլվազեան պատկերահանին, և նորա աղբիւրին ջրերով դալարա-
« և գեղ զարդարուած ։ — Անհրաժեշտ հարկ էր, այդ հանդիսին մէջ,
աղդային լեզուաւ ևս մաղթանք մի ասել. այլ խուռն բազմութիւն
օտար ազգաց, ազգայնոց չեր համարձակել հայերէն ճառակու- այդ
պարագայն, առաջուց գուշակելով մի թէոդոսիացի ազգային, երբ
ֆրանկ ատենախօսը գագրեցոյց իւր ճառը և որոտագոշ կեցցէները
լրեցին, համառօտ յառաջարանութիւն մի զրուցելով ի ոռու լեզու,
թէ անշուշտ, յոյժ ախորժելի պիտի լինի մեծ նկարչապետին իւր մայ-
րինի լեզուաւ լսել բանաստեղծութիւն մի այդ ուրախութեան առթիւ,
կարդաց հայերէն ոտանաւոր մի զոր պիտի գտնեն ընթերցողք յա-
ջորդ ամսաթերթին մէջ։ Նկարչապետն մասնաւոր չնորհակալրութիւնը
յայտնեց կարգացողին և լողաց շատերը, առանց հասկնալու իսկ
շխնայեցին որոտաձայն կեցցէները։

Այնշափ յարգանք ժողովրդեան կողմանէ վայելելով նկարչապե-
տը, նորա հայկական առատաձեռն բարքը և երախտագէտ սրտին
յուղմանքը չէին նման ներել անտարբեր կերպով անցնել այդ ամէնք.
երկրորդ օրը 19 սեպտ. բոյոր ճաշակեցը և այլ շատ հրաւիրեալք՝ ի
ցայդահանդէս ժողովեցան Այլվազեան ապարանքը, ուր ճոխութեան
հետ պայծառ լուսաւորութիւնը, առատ և ազնիւ աղընդերք և ամիճք,
խառն սիրալիք ընդունելութեան արուեստի և շքեզութեան ցոյց մի
կ'ընծայէին. որոյ նմանը ոչ ի թէոդոսիա կամայլ Ղրիմեցիք քաղաքաց
մէջ, այլ միայն եւրոպայի մեծ ամեն քաղաքներում կարելի է տեսնալ
Մեր՝ հայերուա ուրախութիւնը կրկնապատիկ էր. զի երբեմն հայու-
թեամբ հոյակապն կաֆա, գարձեալ կարծես խլրտման մէջ էր, և
հայ ձեռքն էր գարձեալ այդ խլրտումն պատճառողը. Եթէ տեսա-
նողաց հաճելի է բարերարութիւնը, որչափ ապա նոցա՝ որոնք գի-
տակցաբար կը գործեն բարիք, ինչպէս այս առթիս մէջ մեծապատիւ
Յովհաննէս Այլվազեան նկարչապետն հանդերձ իւր ազնիւ Աննա
Տիկնաւ։

Հ. ՔԵՐ. Վ. ՔՈԽԵՆԵՐԵԱՆ

